

մօրը գերեզմանէն գտնուած է փոքր ոսպի մեծութեամբ կանաչի մօտ ուլունքի նման քար մը, որ անկասկած քարն էր իր մատանիին՝ որով սովորութիւն էր թաղել կին մեռեալները, ի նշան ազնուական տոհմի, ինչպէս էր արդարեւ, հանգուցեալը:

Պետիկենց դամբարանները գտնելէ եւ բացուելէ յետոյ պէտք էր երեքին ալ ածիւնները փոխադրել ապահով վայր մը, Աղգային Նոր Գերեզմանատունը, վասն զի հինին հողերը մաս-մաս կը ծախուէին եւ նախկին գերեզմանատունը այլեւս անճանաչելի դառնալ սկսած էր: Այդ պարտականութիւնն ալ ազնուօրէն կատարեց Պր. Պետրոս Քէչիչեան՝ որ երեքին ալ տապանաքարերը իրենց ածիւններով փոխադրեց Շէյխ Մաքսուտի Աղգ. Նոր Հանգստարանը, իր հօրը՝ Կիրակոսի գերեզմանին ձախ կողմը, յատուկ արձանագրութեամբ, թէեւ այդ ածիւններուն վերջին հանգստարանը պէտք էր ըլլար իրենց ձեռակերտ Ս. Քառասնից եկեղեցին:

Փարիզ: ԱՐՏԱՒԱԶԴ ԱՐՔԵՊ.

ՔԵՐՈՎՐԷ ՊՇՏՎՈՆԵԱՆ ԳՈՐՊՇՏՈՒՄ
Ե. ՀԵՄԸՌՈՏ ԿԵՆՍՍԳՐԱԿԵՆ ԳԺԵՐ
Բ. ՊՇՏՎՈՆԵԱՆ

1.
 Հայագիտութեան մարդում ականաւոր դէմքերից մէկն է Քերովրէ Պատկանեան: Տասնիններորդ դարու երկրորդ կիսին Ռուսաստանի բարձրագոյն դպրոցներում դասախօսած եւ առաւելապէս ուսու լեզուով իրենց աշխատութիւնները հրատարակած երկու կարկառուն անձեր ծանօթ են հայագիտութեան պատմութեան: Առաջինը Մկրտիչ Էմինն է, Մոսկուայի Լազարեան ձեմարանի երկարամեայ ուսուցչապետը, երկրորդը՝ Քերովրէ Պատկանեան, Պետերբուրգի համալսարանի արեւելագիտական բաժնի հայագէտը: Մի որոշ չափով՝ դրանց վրայ աւելացնել կարելի է թերեւս նաեւ անունը Ստեփանոս Նազարեանի սկզբնապէս հայագիտութեան ուսուցչապետ Կազանի համալսարանի, իսկ յետոյ տեղափոխուած Մոսկուա, Լազարեան ձեմարան:

Եւ սակայն, մինչդեռ Էմինի եւ Նազարեանի կեանքն ու գրական-գիտական գոր-

ծունէութիւնը բաւականաչափ ուսումնասիրուած են, բաղդատարար քիչ բան է գրուած Քերովրէ Պատկանեանի մասին: Եւ կարելի չէ երբեք ասել, թէ Քերովրէ Պատկանեանի գրական ժառանգութիւնը ո՞ր է չափով լինի քանակի թէ որակի տեսակէտից — պահան արժէք է ներկայացնում, քան օրինակ Մ. Էմինինը:

Նկատենք այստեղ անմիջապէս, որ յիշուած երեք նշանաւոր դէմքերից երկուսը, Ս. Նազարեան եւ Ք. Պատկանեան, եղած են երբեմնի սաներ Դորպատի Համալսարանի: Այդ պարագան մասնակի շահեկանութիւն էր ներկայացնում տողերս գրողի համար, երբ նա 1939 թ. ամառը ուսումնասիրական նպատակով մի ճամբորդութեան ձեռնարկեց դէպի Դորպատ, տեղւոյն վրայ ու վաւերագրային նիւթեր ունենալով ձեռքի տակ՝ ծանօթանալու գորպատեան դպրոցին պատկանող հայ վերածննդիչների ուսանողական տարիներին¹: Ու դրանց փայլուն հոյլի մէջ առաջնակարգ տեղ են գրաւում Ս. Նազարեան եւ Ք. Պատկանեան: Մի այլ աշխատութեան նիւթ կազմելով Ս. Նազարեանի կեանքը Դորպատում, այս էջերի մէջ պիտի ներկայացնենք Ք. Պատկանեանի ուսանողութեան տարիները նոյն այդ հռչակաւոր քաղաքում: Աւելորդ չենք համարում սակայն այստեղ գլխաւոր գծերով եւ համառօտակի ներկայացնել նախ Ք. Պատկանեանի կենսագրականը առհասարակ, մի ընդհանուր գաղափար տալու համար հայագէտի մասին:

2.
 Քերովրէ Պատկանեան շուաւիղն էր Պատկանեան նշանաւոր գերդաստանի, որ մի քանի ականաւոր դէմքեր է տուած հայ կեանքին ու գրականութեան, եւ որ առաջնակարգ տեղ է գրաւում տասնիններորդ դարու մեր մտաւորական կեանքի պատմութեան մէջ: Բաւական է յիշատակել այստեղ անունները Ռափայէլ Պատկանեանի եւ նրա հայր Գարբէլէ քահանայի, որոշելու համար այդ գերդաստանի կատարած դերը մեր մօտաւոր անցեալի մէջ:

Սերովրէ վարժապետ Պատկանեան, գերդաստանի հայրը, Կ. Պոլսից էր տեղափոխուած Ռուսաստան: Նրա որդիներէից մէկն

¹ Հմմտ. մեր «Դորպատի հայ ուսանողութիւնը» աշխատութիւնը. Հ. Կ. Ա. 55 (1941), 106—117, 243—256. արտատպ. Վիեննա 1942 (Աղգ. Մատ. 150):

էր Գարբէլէ քահանան, արեւելահայ առաջին աշխարհարար պարբերականի՝ «Արարատ» շաբաթաթերթի (Թիֆլիս 1851 թ.) խմբագիրը, քովը ունենալով որպէս մօտիկ աշխատակից իր բանաստեղծ որդին, Ռափայէլը: Գարբէլէ քահանայի եղբայրն էր Պետրոս քահանայ Պատկանեան, Քերովրէի հայրը: Որով՝ միեւնոյն գերդաստանի հարազատ զաւակներ, հօրեղբորորդիներ էին 1907 դարու նշանաւոր հայ բանաստեղծ Ռափայէլ Պատկանեան (Գամառ-Քաթիպա) եւ ոչ պակաս յայտնի հայագէտ Քերովրէ Պատկանեան: Քերովրէ Պատկանեան ծնուել է Նոր-Նախիջեւան քաղաքում, 1833 թուականի մայիս 4ին: Անդրանիկ որդին էր Պետրոս քահանայի: Քերովրէի մօր անունն էր Աննա — դուստրը Յարութիւն քահանայ (հետագային՝ վարդապետ) Ալամդարեանի²: Վերջինս Թիֆլիսի Ներսիսեան Դպրոցի առաջին տեսուչն էր, անուանի դպրոցավար, ուսուցիչը իրաւասուր Արովեանի, Ստեփանոս Նազարեանի եւ ուրիշ ծանօթ գործիչների: Ալամդարեան, Ներսէս Ալտարակեցիի գործակիցը դպրոցական ասպարէզում, ունէր նաեւ բանաստեղծական ձիրք: Տեսնում ենք ուրեմն, որ Քերովրէ Պատկանեան նշանաւոր ընտանիքներից էր սերում:

3.
 Հազիւ մէկհեկէս տարի անց Քերովրէի ծնունդից, նրա ծնողները Նոր-Նախիջեւանից Հիւսիսային Կովկասի Ստաւրոպոլ քաղաքն են տեղափոխուում: Տէր Պետրոսը աւագ քահանայի պաշտօն ունէր այնտեղ ու միեւնոյն ժամանակ գործակալ էր շրջանի հայ եկեղեցիների: Քերովրէ իր ուսման ընթացքը սկսաւ Ստաւրոպոլի գիմնազիայում: Ետ շուտով սակայն, 1843 թ., տեղափոխուեցաւ Մոսկուայի Լազարեան ձեմարան, որպէս ճիւղավարժ սան: Այնտեղ նա աչքի ընկաւ իր ընդունակութիւններով ու յառաջադիմութեամբ, մանաւանդ լեզուների եւ պատմական առարկաների մէջ: Աչակերտեց Մկրտիչ Էմինին:

² Ք. Պատկանեանի մասին մի քանի կենսագրական տուեալներ գտնում ենք մենք իր գորպատեան թղթածրարի մէջ (տե՛ս վարժ): Հմմտ. Իւրիչ Վեռնովսկի, «Քերովրէ Պատկանեան», թարգմ. «Բազմալեզու» 1891 թ. մայիս (էջ 139—142) եւ յունիս (էջ 176—180) թիւերը:

1851 թ. յունուար ամսին՝ որպէս Պետերբուրգի հայոց եկեղեցու թուղապետ ասան՝ Քերովրէ Պատկանեան Դորպատ մեկնեց եւ նոյն ամսին մտաւ տեղւոյն համալսարանը: Դորպատում նա մնաց ոչ իսկ երկու տարի: Այդ մասին՝ վարք:

1852 թ. աշնանը Ք. Պատկանեան Պետերբուրգ վերադարձաւ եւ այնտեղից շուտով Ստաւրոպոլ մեկնեց, ուր գիմնազիա մտաւ եւ աւարտեց 1853 թ.: Այդպիսով, հնարաւորութիւն ձեռք բերաւ նա՝ բուն ինքնուսական բարձրագոյն վարժարան մտնելու: Այդպէս եւ արաւ: Նոյն այդ թուականին Ք. Պատկանեան մտաւ Պետերբուրգի Մանկավարժական Ինստիտուտը որպէս ճիւղավարժ ուսանող, շնորհիւ հօր թափած ջանքերին եւ օժանդակութեամբ Կովկասեան տեղ՝ Ք. Պատկանեան 1857 թ., քսանեւոր տարեկան երիտասարդ, յաջողութեամբ աւարտեց Ինստիտուտի պատմագիտական բաժնի լրիւ դասընթացը: Միեւնոյն ժամանակ լրիւ դասընթացը ուսուցական նախ, հիմնովին ուսումնասիրեց ուսուցանող՝ Ք. Պատկանեանի գրականութիւնը: Այլ եւ ու երոպական գրականութիւնը: Այլ եւ ուսերէնից, Փրանսերէնից եւ գերմաներէնից գատ, ուսաւ անգլիերէն ու խոսվերէն լեզուները:

Հետաքրքրութիւնից զուրկ չեն Ք. Պատկանեանի ուսանողական տարիները Պետերբուրգում: Այդ ժամանակները Ռուսիոյ մայրաքաղաքի հայ կեանքում կենդրոնական դէմք էր Աղաթոն Ա. Բիւնեանց՝ ունեւոր, այդպիսի եւ ուսումնասէր մի անձնաւորութիւն, որ հայ ուսանողների — վերաբերմամբ պատեան հայ ուսանողների — վերաբերմամբ յաճախ նպաստաւորողի եւ խրախուսիչի դեր է կատարել: Իր դուռը բաց էր հարցասէր է հայ ուսանողների առջեւ: Ու նրա յարկի հայ ուսանողների առջեւ: Ու նրա յարկի հայ ուսանողներն էին հաւաքում ուսանողներ կիտակ յաճախ էին հաւաքում ուսանողներ փառակի եւ տօն օրեր, հաճելի ու օգտակար ժամացի համար, այլ եւ քննութեան նիւթ դարձնելով այս կամ այն հանրային ու դրական հարցը:

Ք. Պատկանեան անպակաս էր այդ հաւաքոյթներին: Լինելով Ա. Աքիմեանի գաւակներէի հայերէնի դասատուն՝ նա ընկալաւ նաբար աւելի յաճախ էր այցելում այդ տունը: Ու Պատկանեան սիրոյ կապերով եւս կապում է Ա. Աքիմեանի ընտանիքին եւ նշանում նրա դուստր Աննայի հետ:

4.

Աւարտելով Պետերբուրգի Մանկավարժական Ինստիտուտը՝ Բ. Պատկանեան 1857 թ. մեկնում է Թիֆլիս, որպէս ուսուցիչ զբաղուած ինքնակարգ Ինստիտուտի: Հաջորդ տարի է մնում նա այդ քաղաքում: Յաջորդ տարին վերադառնում է Պետերբուրգ եւ ամուսնանում իր նշանածի՝ Ա. Աքիմեանի դուստր Աննայի հետ:

Հիմնելով իր ընտանեկան յարկը եւ ապահովելով նիւթական վիճակը՝ Բ. Պատկանեան հանգիստ կերպով նուիրում է իր սիրած պարագմունքներին՝ գիտական եւ իմասնաւորի հայագիտական աշխատութեան, միշտ նորանոր պրոպոզիցիաներ անելով հայ լեզուի ու մատենագրութեան մէջ, աւելի ու աւելի խորացնելով իր գիտութիւնը եւ հմտութիւնը այդ մարզում: Ուսումնասիրում է նաեւ իրաներէն ու արեւելագիտութիւն, առհասարակ: Նոյն այդ տարիները պրպտումները արդիւնքն է լինում իր գիտական երախայրիքը՝ Մատենագիտութիւն հայ գրականութեան, գրած Փրանսերէն լեզուով եւ 1860 թ. լոյս ընծայած Պետերբուրգի Գիտութեանց Ակադեմիայի Տեղեկաբերի մէջ՝ Catalogue de la littérature arménienne depuis le commencement du IV. siècle jusque vers le milieu du XVII. վերնագրով: Հետեւում են ուրիշ գործեր:

Գիտական եւ բանասիրական աշխատութիւնները պահանջում են սակայն եւ ուրիշ տեսակի նպաստաւոր միջոցառում, որ գրեթէ միշտ էլ — լինի մեղմում թէ Ռուսաստանում կամ Եւրոպայում — կապուած է եղել ուսուցչապետական ամբիոնին: Բարեբախտաբար, այդ հնարաւորութիւնն եւս շուտով ստեղծւում է երիտասարդ գիտնականի համար: Այն է՝ 1861 թ. թողնում է իր պաշտօնը Պետերբուրգի Համալսարանի հայերէնի դասախօս Ն. Բերոյեւ ու Մկրտիչ Էմիլի յանձնարարութեամբ թափուր մնացած պաշտօնը յանձնւում է 28 տարեկան Բերովիչ Պատկանեանին:

Նոյն այդ տարուանից 1861 թ. սկսում է գրական եւ գիտական մի բեղուն գործունէութեան շրջան Բ. Պատկանեանի համար: Գիտութեանց Ակադեմիայի յանձնարարութեամբ ու միջոցներով նա լոյս է ընծայում մի շարք հայ պատմագիտական գիտական թարգմանութիւններ, օժտած հմուտ ծանօթագրութիւններով ու ներածականներով: Մէկը միւսի յետեւից հրատարակ է հանում հայ լեզուին ու բարբառներին, հայ մատենագրութեան ու պատմութեան նուիրած խորագրին ուսումնասիրութիւններ: Լոյս է ընծայում հայերէն լեզուի մի գիտական շարադրութիւն՝ «Փորձ Սասանեան հարստութեան պատմութեան, հայկական աղբիւրների հիման վրայ»: Ընդամենը մէկ տարի յետոյ (1864 թ.), լոյս է ընծայում, դարձեալ ուսերէն լեզուով, իր դոկտորական զեկերտագրին՝ «Հետազոտութիւններ հայ լեզուի կազմութեան մասին», սրով եւ ձեռք է բերում բուն իսկ պաշտօնատար ուսուցչապետի (Ordinarius) ամբիոն իր պատկանած Փակուլտետում: Տարուէ տարի հետեւում են հայագիտական նորանոր աշխատութիւններ: Իրանք գրեթէ ամէնը կրում են հեղինակի եւ հրատարակչի անունն ու աղբիւրն սկզբնատառերը միայն՝ Բ. Պ.: Եւ այսպէս, Բ. Պատկանեան իր հմտալից աշխատութիւնների շնորհիւ ձեռք է բերում եւրոպական հռչակ: Նրա ուսումնասիրութիւնները մի քանիսը հրատարակւում եւ կամ թարգմանւում են Փրանսերէն կամ գերմաներէն, այլ եւ հայերէն մասնաւորապէս Արզար Յովհաննիսեանի «Փորձ» նշանաւոր գրական հանդէսի մէջ (Թիֆլիս):

5.

Բ. Պատկանեան ոչ միայն հմուտ գիտնական էր, այլ եւ ունէր բանաստեղծական ձիրք, որ յատուկ էր Պատկանեան Գերդաստանի անդամներից ոմանց, գլուխ ունենալով Գամառ-Քաթիպան: Քերովիչ Պատկանեանի գրչի տակից ելած ոտանաւորները, թէ բացառութեամբ, արդիւնք են իր գորպատեան ուսանողական տարիների:

Անշուշտ, որպէս բանաստեղծական ձիրքի տէր մէկն էր նաեւ, որ նա ըստ արժանւոյն գնահատեց Յարութիւն Ալամդարեանի թողած գրական ժառանգութիւնը եւ մի ա-

նանձին հատորով լոյս ընծայեց նրա ձեռագիր՝ ոտանաւորները՝ «Չափաբերականք» վերնագրի տակ (Պետերբուրգ, 1884 թ.):

Երբ մենք խօսում ենք Բ. Պատկանեանի կեանքի մասին, անտես չպիտի անենք եւ իր ուսուցողական գործունէութեան վաստակը: Անշուշտ, մեծ չէ եղած Պետերբուրգի համալսարանի արեւելագիտական ֆակուլտետի այն ուսանողների թիւը, որ հայագիտութեան դասընթացներին են հետեւած Բ. Պատկանեանի մօտ: Դժբախտաբար, մանրամասն տեղեկութիւններ պակասում են մեզ այդ մասին: Այսչափ ասենք այստեղ, որ երկու նշանաւոր հայագէտներ աշակերտած են Պատկանեանին եւ առ ոտս նորա հմտացած այդ մարդու, դառնալով արժանի աշակերտները իրենց մեծանուն ուսուցչի: Մէկը՝ հայ, միւսը՝ օտարազգի:

Այս վերջինն էր՝ ուսուսանող արեւելագէտ, հռչակաւոր հայագէտ ու վրացագէտ եւ յարեթաբանութեան հիմնադիր Նիկ. Մառ, որ եւ յաջորդեց իր ուսուցչի Բ. Պատկանեանին նրա մահից յետոյ, որպէս ուսուցչապետ Պետերբուրգի համալսարանի արեւելագիտական ֆակուլտետի, զբաւելով հայագիտութեան եւ վրացագիտութեան ամբիոնը: Պատկանեանին է աշակերտած Պետերբուրգի համալսարանում նաեւ Ստեփան Մալխասեան՝ կովկասահայ նշանաւոր հայկաբան եւ վաստակաւոր մանկավարժ երկարամեայ դասատու եւ տեսուչ Թիֆլիսի Ներսիսեան Դպրոցի, կարճ ժամանակ նաեւ Էջմիածնի Գէորգեան ձեմարանի, այլ եւ հեղինակ հայագիտական մի քանի ուսումնասիրութիւնների, հրատարակելի հայ պատմագիրների, հանրային եւ ազգային գործիչ կովկասում, եւ այլն: Այս կապակցութեամբ յիշել կարելի է կողմնակի կերպով եւ անունները հետեւեալ երեք հայ լեզուաբանների ու հայագէտների:

Սարգիս Սարգսեան, Լեւոն Մսերեան եւ Նիկ. Աղոնց: Առաջին երկուսը յայտնի են իրենց բարբառագիտական ուսումնասիրութիւններով, իսկ Նիկ. Աղոնց, որի անունը հանրածանօթ է արդէն, հեղինակն է մի հանրապետութիւնների՝ բանասիրական եւ մատենագրական բովանդակութեամբ:

Ս. Սարգսեան³ եւ Լ. Մսերեան⁴, որպէս բարբառագէտներ, մեծապէս հետեւած են օրինակին Բ. Պատկանեանի, որ հիմնադիրն է հայ բարբառագիտութեան: Նիկ. Աղոնց⁵, որ աշակերտած է Նիկ. Մառի, ընթացաւ անկախ ուղիով: Նա եւս մնաց հետեւորդ ու ներկայացուցիչ նոյն այն գիտական մեծ դպրոցի, որին պատկանում էր Աղոնցի ուսուցչի՝ Նիկ. Մառի ուսուցչի Բ. Պատկանեան — արեւմտեան-եւրոպական բանասիրական գիտութեան, հնդեւրոպական լեզուաբանութեան:

Դարձեալ քերովիչ Պատկանեան անդամակցած ու իր մերձաւոր աշխատակցութիւնն է բերած մի շարք գիտական ընկերութիւնների ու մասնակցած է միջազգային արեւելագիտական ժողովների: Այսպէս, րեւելագիտական ժողովների: Այսպէս, 1861—1868 թ. մասնակցած է կովկասեան Յանձնախումբին, 1868 թ. ընտրուած է նոյն Յանձնախումբի ղեկանատան արտաքոյ կարգի պաշտօնեայ եւ մնացած է այդ պաշտօնում մինչեւ 1874 թ.: 1867—1882 թ. եղած է Հնագիտական Ընկերութեան (Պետերբուրգ) արեւելեան բաժնի քարտուղար, իսկ 1882—1885, տեսուչ նոյն բաժնի: Ապա, 1860 թ. Բ. Պատկանեան ճամբորդած է Եւրոպա, եղած է նաեւ Վիեննա ու Վենետիկ, 1873 թ. բանասիրտած է Գերմանիայում եւ Ֆրանսիայում հայ լեզուի ու վանայ բեւեռագիր արձանագրութեանց մասին, իսկ 1882 թ. ընտրուած է Լուվէնի Muséon գիտական հանձնարարական կազմի անդամ: Ասենք վերջապէս, որ իրեն՝ որպէս ուսուսանողի պաշտօնեայի՝ տրուած է «Իսկական պետական խորհրդական» տիտղոսը:

Իր բեղմնաւոր կեանքը մեծանուն հայագէտը կնքած է համեմատաբար վաղ — մտաւորական ոյժերի լրման նոր հասած եւ հազիւ

³ Ս. Սարգսեան, մի շատ խոստմնալի ոյժ, որ մեծաւ երիտասարդ հասակում, հեղինակն է հայերէն լեզուով յօրինած «Ազուլիսի բարբառք» («Ձօղերի լեզուն») հմտալից աշխատութեան (Մոսկուա 1882 թ.):

⁴ Լ. Մսերեան հեղինակն է ռուսերէն լեզուով գրած եւ հայ բարբառներին ու մասնաւորապէս Տարոնի (Մուշ) բարբառին նուիրած աշխատութեանց: Հմտ. իր «Հայ բարբառագիտութիւն» գործը թարգմանութեամբ Հ. Գ. Մէնչիլիշեանի. Վիեննա 1899:

⁵ Նիկ. Աղոնց (ծն. 23 յունուար 1872), որ իր մահկանացուն կնքեց (27 յունուար 1942) Երևանում, ուր դասախօս էր կեանքի վերջին տարիները, իր հայագիտական սկզբնական գործերը հրատարակած է արեւելագիտական ուսերէն, իսկ յետոյ՝ հայերէն ու Ֆրանսերէն լեզուներով: Իր գլուխ գործոցն է՝ «Հայաստան Յուսանիմանուի դարաշրջանում» կարեւոր աշխատութիւնը՝ գրուած ռուսերէն լեզուով: Պետերբուրգ 1908:

56 տարին բոլորած, 28 տարիներ անընդհատ Պետերբուրգի համալսարանի արեւելագիտական բաժնի հայագիտութեան ամբիոնը ըստ արժանւոյն ներկայացնելուց յետոյ: Բ. Պատկանեան մեռած է 1889 թ. ապրիլ 2/14ին Պետերբուրգում ու թաղուած է նոյն քաղաքի հայոց գերեզմանատունը:

Բ. Բ. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՏԵՐԻՆԵՐԸ ԳՈՐԳԱՏՈՒՄ

6.

Պաշտօնը Արքեպիսկոպոսի եւ իւր դպրոցական ընկեր ու մտերիմ բարեկամ Ստեփանոս Նազարեանի օրինակին հետեւելով՝ բաւական թուով հայ երիտասարդներ ղրկեցին այնուհետեւ Գորգատ, գերման համալսարանական ուսմանը հետեւելու եւ գերման լեզուին հմտանալու ու գերման-եւրոպական մշակոյթով դաստիարակուելու փափազով: Այդ պատանիներին ոմանք նախկին աշակերտներ էին Արքեպիսկոպոսի, ուրիշներ՝ Նազարեանի խրատոյսն ունէին իրենց հետ, Գորգատ ղրկելով:

Արքեպիսկոպոս, գիտենք, արձանագրուած ուսանող չէ եղած Գորգատում, այլ ազատ ունկնդիր (1830—1836 թ.) միայն: Առաջին իսկական հայ ուսանողը Գորգատի համալսարանի եղած է Ս. Նազարեան (1835—1840): Չհաշուած ազատ ունկնդիրները, Գորգատի համալսարանի գերմանական շրջանում, որ տեւեց մինչեւ 1889 թ. եւ ուսականացաւ այնուհետեւ, այդ համալսարանը յաճախած են թուով մէկ քառասնեակ արձանագրուած, իսկական հայ ուսանողներ⁶: Այդ քառասնեակ հայ ուսանողները մի կարեւոր մասով Մոսկուայի Լազարեան ձեմարանի նախկին սաներ եղած են:

Անցեալ դարու յիսնական թուականները Գորգատի հայ ուսանողութեան ոսկեդարը համարել կարելի է: 1835—1889 թ. արձանագրուած ու թուով քառասուն հայ ուսանողների կէսը այդ տարիներին է եղած Գորգատի համալսարանում — Գէորգ Աքիմեան, Գաբրիէլ Պատիսեան, Գրիգոր Աղախիրեան, Գէորգ Միրիմանեան, Համբարձում Փափազեան, Մարկիոն եւ Ալեքսանդր Ռոտինեան եղբայրներ, Պետրոս Միմէնեան, Գէորգ

⁶ Հմմտ. մեր վերոյիշեալ աշխատութիւնը (տ. ծան. 1):

Գորգիսեան եւ ուրիշներ: Դրանց շարքին էր պատկանում ահա եւ Քերովնէ Պատկանեան, նմանապէս նախկին սան Լազարեան ձեմարանի:

Բ. Պատկանեան շատ երկար ժամանակ չի մնում Գորգատում — ոչ իսկ՝ երկու ամբողջ տարի: Ուսումը կիսատ թողած ու սրտիցաւով՝ հաղիւ 19 տարին լրացրած պատանին ստիպուած է լինում հրաժեշտ տալ Գորգատին: Պատճառը հետեւեալն էր: Բ. Պատկանեան, տեսնելով, որ Պետերբուրգի հայոց եկեղեցու թոշակառու սան էր Գորգատում, ինչպէս նաեւ՝ իրեն հետ միասին՝ մի քանի ուրիշներ: Արդ, մայրաքաղաքի հայոց եկեղեցու վարչութեան փափազն էր, որ իր սաները եւ հետագային հոգեւորական կոչուին ընդունէին եւ որպէս եկեղեցականներ — կուսակրօն կամ աշխարհիկ քահանայ վարձահատոյց լինէին Հայոց Եկեղեցուն: Այդ նպատակն էր հետապնդում մանաւանդ Աղաթոն Դաւթեան Աքիմեանց, որ ամենէն ազդեցիկ անձնաւորութիւնն էր մայրաքաղաքի հայ շրջանակներում, եւ որ ինքն եւս զոհաբերութիւններ էր անում նոյն այդ ուղղութեամբ:

Եւ սակայն, Գորգատի համալսարանի ուսանողները փափազ չէին յայտնաբերում հոգեւոր ասպարէզն ընտրելու իրենց համար: Դրանց թուում էր նաեւ Բ. Պատկանեան, որ ոչ իր խառնուածքով եւ ոչ աշխարհայեացքով կոչուած չէր զգում իրեն այդ ասպարէզի համար: Արդ՝ Պետերբուրգի հայոց եկեղեցու վարչութիւնը — եւ առաջին հերթին Աղաթոն Աքիմեանց — այն համոզումը կազմելով թէ համալսարանական լրիւ դասընթացն աւարտող հայ երիտասարդներ ասպարէզի աւելի փայլուն հեռանկարներ ունենալով է որ խուսափում են հոգեւորական կոչումից, պատշաճ են համարում, որ իրենց զորպատեան թոշակառու սաները (ստիպելով իրաներ) կարճ ժամանակ միայն մնան համալսարանում, չաւարտեն իրենց ուսումը, որով եւ, կարծում են, աւելի հակամէտ պիտի լինէին դրանք հոգեւոր կոչումին: Այդպէս խորհելով՝ որոշ ժամանակ յետոյ նրանք զաղարեցնում են թոշակառու ուսանողների նպատը ու հարկազրուած նրանց որ ուսումը կիսատ թողնեն ու վերադառնան: Միաբուծ են, ի հարկէ: Գորգատի ուսանողներից ոչ ոք հոգեւոր ասպարէզ չընտրեց, բացի երկուսից, որոնք են՝ Գրիգոր Աղա-

փիրեան⁷ եւ Համբարձում Փափազեան⁸: Այդ է լինում եւ Քերովնէ Պատկանեանի պարագան: Այդ է լինում նաեւ պատճառ, որ նա եւս, ինչպէս ուրիշներ, թերի է թողնում իր համալսարանական ուսումը Գորգատում ու Պետերբուրգ վերադառնում հարկազրուած⁹:

Այսպէս կամ այնպէս, Գորգատը իր խոր դրոշմն է թողնում Բ. Պատկանեանի, ինչպէս առհասարակ բոլոր ուսանողների վրայ: Իր ընդհանուր գիտական պատրաստութեան հիմը նա Գորգատում է ստանում, իւրացրելով գերման գիտութեան մեթոտը եւ աշխատանքի ուղղութիւնը: Հետագայի գիտնական Բ. Պատկանեան շատ բան է պարտական Գորգատի համալսարանին եւ գերման գիտական ոգուն:

7.

Քերովնէ Պատկանեանի գորպատեան ուսման ընթացքին ծանօթանալու համար մէկ գլխաւոր ու բուն իսկ աղբիւր կայ մեր տրամադրութեան տակ — դիւանակաւ աղբիւր: Անպայման կարեւոր արժէք ներկայացնում է իրեն ժամանակակից գորպատեան նախկին ուսանող Ալեքսանդր Ռոտինեանի¹⁰ Յիշողութեանց այն հատուածը¹¹ եւս, որ նուիրուած է Բ. Պատկանեանին:

⁷ Գրիգոր Աղախիրեան՝ Ատրախանցի: Նախկին սան Լազարեան ձեմարանի: Գորգատի համալսարան յաճախած 1849—1851 թ.: Հետագային էջմիածնի միարան, եպիսկոպոս:

⁸ Համբարձում Փափազեան՝ Կ. Պոլսեցի: Նախկին սան Լազարեան ձեմարանի: Գորգատի համալսարան յաճախած 1849—1851 թ.: Հետագային հոգեւորական:

⁹ Մեզ հաւանական չի թուում, որ Բ. Պատկանեան, ինչպէս ուրիշ ոմանք Գորգատից Պետերբուրգ թերաւարտ վերադարձաներ, մի առ ժամանակ այդ տեղի հայոց եկեղեցում — նիւթական նեղութիւնից զրդուած — տիրացու թիւն արած լինի (տ. «Բազմազրդուած — տիրացու թիւն արած լինի» 1891, էջ 141): 1852 թ. սեպտեմբեր ամսին, ընդ Ստաւրոպոլ մեկնէր, ուր եւ գիտենք, մտաւ տեղւոյն գիմնազիան ու աւարտեց այն, յաջորդ տարին: Ալեքսանդր Ռոտինեան՝ թիֆլիսեցի: Նախկին

¹⁰ Ալեքսանդր Ռոտինեան՝ Գորգատի համալսարան սան Լազարեան ձեմարանի: Գորգատում այն: Գիւղա-յաճախած 1852—1856 թ. եւ աւարտած այն: Գիւղա-յանուտ: Պետական պաշտօնեայ: Հանրային գործիչ:

¹¹ «Արձագանք» (Թիֆլիս) 1892, թիւ 110 (սեպտ. 23): — Գորգատեան (երեւանցի), դարձեալ նախկին Լեւոն Տիգրանեան (երեւանցի), դարձեալ նախկին սան նոյն համալսարանի: Եւ սակայն, այս վերջինին սան նոյն համալսարանին էն աւելի՛ իր ուսուցիչներ արժէք ներկայացնում են աւելի՛ իր ուսուցիչութեան շնորհիւ (1866 թ., ապա՝ 1870—1875 թ. նոյնութեան շնորհիւ) մասին, լինելով ախնաատեսի զբաժնէր: Գորգատում) մասին, լինելով ախնաատեսի զբաժնէր: Բ. Պատկանեանին նուիրած հատուածը («Լուծայ» 1903, թիւ 5, սեպտ.—հոկտ. էջ 32—33) նորութիւն չէ պարունակում իր մէջ եւ ըստ էութեան վերաբարձրութիւն է Ալ. Ռոտինեանի հարգած տեղեկութեանց:

Վերջինիս անունով Գորգատի համալսարանի դիւանում պահուած կայ մէկ թղթածրար (Acta) միայն, որ գտնուում է Ուրհուրի եւ Վերատեսչութեան գործերում¹²:

Թղթածրարի վրայ իբրեւ Բ. Պատկանեանի արձանագրման թիւ (Immatikulationsnummer) նշանակուած է՝ 5695. այսինքն, համալսարանի հիմնադրման եւ կամ, աւելի ճիշտ, վերակազմութեան թուականից (1802 թ.) սկսած՝ Բ. Պատկանեան ժամանակագրական կարգով 5695րդն է եղած (իսկ գորպատեան հայ ուսանողների շարքում, առհասարակ, 10րդը), որ արձանագրուած է իսկական ուսանող: Թղթածրարը կամ «Գործը» բացուած է արձանագրման օրն իսկ՝ 19 Յունուարի 1851 թ.: Այս կապակցութեան մէջ ասենք, որ իր համաքաղաքացի ու ընկեր Պետրոս Միմէնեանց¹³ եւս նոյն այդ օրն է մտած Գորգատի համալսարան, որպէս արձանագրման թիւ ստանալով՝ 5694: Երկուքն եւս՝ նախկին սաներ Լազարեան ձեմարանի, այնտեղից միասին եկած Գորգատ:

Բ. Պատկանեանի թղթածրարը կամ «Գործը» պարունակում է թուով ոչ աւելի քան եօթն գրութիւն: Պատճառն այն է նախ, որ նա թերի է թողած իր ուսումը Գորգատում, երկրորդ՝ համալսարանը թողնելիս դիւանից յետ է վերցրած իր փաստաթղթերի մէկ մասը: Գորգատի համալսարանից նա դուրս է եկած 1852 թ. Սեպտ. 9ին, թէեւ իր թղթածրարը պաշտօնապէս փակուած է աւելի ուշ, 3 Յուլ. 1853 թ.:

Բացի իր թղթածրարի մէջ եղած նիւթերից, Բ. Պատկանեանի մասին մի քանի անհրաժեշտ տուեալներ գտնում ենք մենք եւ ուսանողական արձանագրմանց Մայր Մատեանի (Album Academicum) մէջ: Ստորեւ նախ յառաջ կը բերենք վերջինիս համապատասխան հատուածը, ապա թէ կը դիմենք թղթածրարի նիւթերին: Այստեղ իսկ ասենք սակայն, որ Բ. Պատկանեան ինչպէս նաեւ

¹² Գորգատի համալսարանի լրիւ դասընթացն աւարտած նախկին ուսանողների անունով — Ս. Նազարեան, Գ. Գորգիսեան եւս — երկուսիս թղթածրար կայ պահուած համալսարանի դիւանում. մէկը Ուրհուրի եւ Վերատեսչութեան, միւսը՝ Ծախուլտեայի գործերում, իսկ թերաւարտների անունով՝ մէկական թղթածրար միայն, Ուրհուրի եւ Վերատեսչութեան գործերում:

¹³ Պետրոս Միմէնեան՝ Նոր-Նախիջևանցի: Նախկին սան Լազարեան ձեմարանի: Գորգատի համալսարան յաճախած 1851—1853 թ.: Հետագային յայտնի դպրոցական գործիչ եւ խմբագիր «Մեղու Հայաստանի» թերթի: Ղեկավար դէմք պահպանողական ուղղութեան:

